ՀԱՆՐԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԺՈՂՈՎ ԱՐԵՒԵԼԱԳԻՏԱՑ

Այս տարի սեպտեմբերի 13ին Բեդրպուրկ պիտի գումարուի Արեւելագիտաց երրորդ ուսումնաժողովը, եւ պիտի տեւէ 10 օր։ Առաջին ժողովը Բարիզ, երկրորդը Լոնտրա գումարուեցաւ։

Այս ուսումնաժողովը մանաւորապէս պիտի զբաղի Ասիոյ Ռուսաստանի վրայ, եւ պիտի բովանդակէ չորս նիւթ։ Առաջին նիւթը պիտի զբաղի Սիպերիոյ վրայ՝ արեւելեան եւ արեւմտեան, երկրորդը՝ կեդրոնական Ասիոյ վրայ, որ Ռուսաց տիրապետութեան տակն է, հանդերձ Իւզպէքիստանի ազատ իշխանութիւններով. երրորդը՝ Կովկասու վրայ հանդերձ Ղրիմու եւ Եւրոպայի Ռուսաստանի այն գաւառաց հետ, ուր ասիացի ժողովուրդներ կը բնակին. չորրորդը՝ Անդրկովկասու վրայ, Վրաստան եւ Հայաստան։ Հետեւեալ երեք գումարմանց մէջ ալ այն ուսումնաժողովը պիտի զբաղի Ասիոյ միւս մասանցը վրայ։ Առաջին նստին մէջ՝ արեւելեան Թուրքաստանի, Դիպէդի, Մոնկոլիոյ, Մանչուրիոյ եւ Գորէայի, բուն Չինաստանի եւ Ճաբոնի վրայ. երկրորդ նստին մէջ Հնդկաստանի վրայ՝ այսր եւ անդր Գանգէսի, Աֆղանստանի, Պարսկաստանի եւ Հնդկա-չինացի Արշիպեղագոսին վրայ. երրորդ նստին մէջ Տաճկաստանի, Արաբիոյ եւ Եգիպտոսի վրայ։

Այն եօթը գումարմանց մէջ խօսուելիք նիւթերը պիտի վերաբերին վերոյիշեալ աշխարհաց իւրաքանչիւրին Աշխարհացուցագրութեանը (Cartographie), Ժողովրդագրութեանը (Ethnographie), Լեզուագիտութեանը (Linguistique), Պատմութեանը եւ Գրականութեանը։ Վերջին երկու գումարմանց նիւթ պիտի ըլլան այն խնդիրներն որ կը վերաբերին ընդհանուր արեւելեան ազգաց հնախօսութեանն ու դրամագիտութեանն, եւ անոնց կրօնական ու իմաստասիրական դրութեանցը։ Ո՛ր եւ իցէ բանաճառութիւն որ վերաբերի առ քրիստոնէութիւն, քաղաքականութիւն, վարչութիւն, վաճառականութիւն, ձեռնարուեստութիւն այժմու ժամանակացս արգիլուած է։

Կարդացուած յիշատակագրութեանց, ինչպէս նաեւ ամեն ճառախօսութեանց համառօտութիւնը պիտի հրատարակուի նոյն գումարման Ուսումնաթերթին (Bulletin de la Session) մէջ գաղղիերէն լեզուով։ Կարգաւորիչ Յանձնաժողովը (Comité d'organisation), որուն անդամներէն մէկն ալ է հայազգի Գ. Քերովբէ Պատկանեան դասատու Համալսարանին Բեդրպուրկի, ցուցակ մը պիտի հրատարակէ այն խնդրոց, որոնց վրայ պիտի խօսուի Ուսումնաժողովոյն մէջ։ Իսկ այն գիտնականք որ ուզենան մասնաւոր խնդիրներ առաջարկել Արեւելից նկատմամբ, պէտք է գրով իմաց տան կամ Կարգաւորիչ Յանձնաժողովոյն եւ կամ թղթակից անդամոց մէկուն, ընկերելով համառօտ գրուածք մը իրենց կարծիքը նոյն խնդրոց վրայ։ Այս պայմանաւ միայն ընդունելի կ'ըլլան այն խնդիրները քննութեան առնուելու։ Ուսումնաժողովոյն մէջ կարդացուելիք գրութիւնները կրնան հաղորդուիլ ուղղակի առ Յանձնաժողովն Բեդրպուրկի կամ թղթակից անդամոց, որ այս նպատակաւ որոշուած են։

Ով որ կ'ուզէ անդամ գրուիլ այս Ուսումնաժողովոյն, այր կամ կին, եւ մասնակից ըլլալ անոր երկասիրութեանցը, բաւական է որ 12 ֆռանգ հատուցանէ, ոսկի դրամ. որով կ'ընդունի տոմսակ մը անդամակցութեան, եւ կրնայ ներկայ ըլլալ ամեն գումարմանց, ու մուտք ունենալ Արեւելքի վերաբերեալ առարկայից հանդիսարանին (Exposition), որ այս առթիւ պիտի բացուի, ինչպէս նաեւ իրաւունք կ'ունենայ ստանալու օրինակ մը ամեն հրատարակութեանց Ուսումնաժողովոյն, եւ կարգել մէկն իրեն ներկայացուցիչ։

digitised by A.R.A.R.@